AASW
ARMENIAN ASSOCIATION OF SOCIAL WORKERS

AASW-75/25
07.09.2025

ՀՀ Վայոց ձորի մարզի
Վայք համայնքի ղեկավար՝
պրն. Մխիթար Մաթևոսյանին

Հարգելի պարոն Մաթևոսյան,

Ինչպես գիտեք, «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա»-ն *(այսուհետ՝ Ասոցիացիա)* Վայքի համայնքապետարանի աջակցությամբ 2023 թվականի նոյեմբեր ամսից հիմնել է Սոցիալական աշխատանքի կենտրոն Վայք համայնքում: Երկու տարվա ընթացքում Կենտրոնը սոցիալ-հոգեբանական աջակցություն և մասնագիտական ծառայություններ է տրամադրել **ավելի քան 100 տեղացի և տեղահանված ընտանիքների:** Մատուցված ծառայությունների արդյունքում շահառու ընտանիքների մեծամասնության մոտ գրանցվել է *դիմակայունության զգալի աճ, բազմաթիվ ընտանիքներ ակտիվորեն ներգրավվել են համայնքային ծրագրերում,* իսկ տեղահանված ընտանիքների մեծ մասն արդեն հաջողությամբ *ինտեգրվել է համայնքում:* Մշտադիտարկումները ցույց են տալիս, որ ծրագրի շահառու ընտանիքները կարողանում են դիմակայել առաջացող մարտահրավերներին, ձեռք են բերել համայնքային կապեր, մեծ մասն անցել են աշխատանքի, ինչպես նաև բարելավել են սոցիալական շփումները ընտանիքներում և միջավայրերում:

Ասոցիացիան նպատակ ունի երկարաժամկետ հիմքերի վրա շարունակել և ընդլայնել իր գործունեությունը Վայք համայնքում: Այս նպատակով Ասոցիացիան պատրաստվում է դիմել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ սոցիալական ծառայությունների մատուցումը հավաստագրելու նպատակով: Հավաստագրվելու համար նախապայմանը համայնքում հիմնական տարածքի առկայությունն է:

Որպես վերջնարդյունք, համայնքը կունենա գործող, կահավորված և վերապատրաստված մասնագետներով Կենտրոն, որը կշարունակի սոցիալական ծառայություններ մատուցել համայնքում խոցելի ընտանիքներին: Այս Կենտրոնը կաջակցի համայնքապետարանին սոցիալական խնդիրների բացահայտման և դրանց լուծման գործընթացում՝ դառնալով համայնքային սոցիալական քաղաքականության իրականացման կարևոր գործընկեր: Բացի այդ, Ասոցիացիան շարունակական հիմունքներով կվերապատրաստի համայնքի սոցիալական ոլորտի մասնագետներին՝ հզորացնելով նրանց հմտությունները և երաշխավորելով մասնագիտական ծառայությունների մատուցումը:

Այս ամենը կյանքի կոչելու նպատակով խնդրում եմ Ձեր աջակցությունը Վայք համայնքում համապատասխան տարածքի (ցանկալի է 2-3 սենյակ) անհատույց հիմունքներով տրամադրման հարցում՝ 6 տարի ժամկետով: Ի դեպ, հավաստագրման նվազագույն ժամկետը՝ 5 տարի է:

Նախապես շնորհակալություն Ձեր աջակցության համար:

Միրա Անտոնյան
Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի նախագահ

Կոնտակտային տվյալներ
Պ. Սևակ 30, բն. 43/1, Երևան, 0069 ՀՀ
+374 95 601 600, infoaasw@gmail.com
www.aasw.org